# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2033-Ա « 21 » մայիսի 2025 թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.142 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի, «Երևանի հ.142 մսուր-մնակապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի գրությունները, ՀՀ ներքին գործերի նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացությունը՝ «Երևանի հ.142 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ շենքի տեխնիկական վիճակի և հետագա շահագործման վերաբերյալ և հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 61-րդ հոդվածի դրույթները.

1. Ժամանակավորապես դադարեցնել «Երևանի հ.142 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գործունեությունը՝ 2025 թվականի հունիսի 1-ից:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել «Երևանի հ.142 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**